

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	ԳԵՂԱԿԵՐՏ
ՄԱՐԶ	ԱՐՄԱՎԻՐ



1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ  
ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գեղակերտի գյուղական համայնքը /նախկին Սամաղար/ ունի հին պատմություն: Ցավոք, պատմական տեղեկություններ գյուղի անցյալի վերաբերյալ չեն պահպանվել: Բայց գյուղի պատմական անցյալի վկան 13-րդ դարում կառուցված Սուրբ Հարություն եկեղեցին է, որը ներկա պահին գործող է: Գյուղի ներկայիս տարածք, որի անունը այն ժամանակ հայտնի չի եղել, 1928 թվականի Թուրքմենչայի պայմանագրից հետո, երբ Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին, Պարսկաստանի Սալմաստ հայաշատ գավառի Ուրմիա գյուղաքաղաքի Սամաղար բնակավայրից մեծ թվով գաղթականներ են եկել և տարածքը անվանել են Սամաղար: Հետագայում` 1978թվականին, գյուղի օտարածին անունը փոխելու նպատակով այն վերանվանվել է Գեղակերտ, 1991թվականին այն կրկին դարձել է Սամաղար, և սկսած 2006 թվականից նորից դարձել է Գեղակերտ:

Ներգաղթածները հիմնականում զբաղվել են այգեգործությամբ և գինեգործությամբ, զարգացրել են առևտուրը և արհեստները: Ժամանակին մեծ համբավ է վայելել Սամաղարի գինին, որը Եփրատ, Տիգրիս գետերով հասցրել են Միջին Արևելք, ինչպես նաև արտահանել են Արմավիր, Կրասնոդար, Դոնի Ռոստով և այլն:

Գյուղի դպրոցը, որ ներկա պահին միջնակարգ է, ևս ունի հին արմատներ: Առաջին եռաստիճան դպրոցը գյուղում բացվել է 1895 թվականին` ռուսական կայսր Նիկոլայ II-ի անմիջական թույլտվությամբ և համաձայնությամբ: Դպրոցում ուսուցումը եղել է ռուսերեն: 1927 թվականին գյուղում բացվել է յոթնամյա դպրոց ,որի տեղում ներկա պահին տեղակայված է համայնքի մարզադպրոցը և որը 1934 թվականից դարձել է միջնակարգ:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Սամաղար գյուղը եղել է գավառական կենտրոն, իր մեջ ներառելով Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Թալինի, Արտաշատի, Ապարանի և Աշտարակի մի շարք բնակավայրեր և 1934 թվականին իր տեղը զիջել է Էջմիածնին:

Գեղակերտ գյուղի կենտրոնում կան երեք հուշակոթողներ: Դրանցից մեկը հավերժացնում է Հայրենական Մեծ պատերազմում զոհված 117 սամաղարցիների հիշատակը, իսկ մյուս հուշարձանը կառուցված է ի պատիվ արցախյան ազատամարտիկների, որոնցից երեքը զոհվեցին այդ պատերազմում: Հուշարձանը կառուցվել է Գեղակերտ համայնքի պատվավոր քաղաքացի Ռուստամ Նիկողոսյանի նվիրատվությամբ: Մեծ եղեռնի 100 ամյակին նվիրված խաչքարը ամբողջացնում է այդ հուշահամալիրը:

Համայնքն ունի 2800 մարդ բնակչություն, հիմնականում տեղաբնակներ են` ներգաղթ տեղի է ունեցել 19-րդ դարի սկզբներին` Ալաշկերտից և Պարսկաստանի Սալմաստ գավառից:

Համայնքում կա մշակույթի պալատ : Դա մի գեղեցիկ թամանյանական կառույց է, որը կառուցվել է անցյալ դարի կեսերին և մեծ դեր է խաղացել Սամաղարի մշակութային կյանքի զարգացման գործում: Ներկա պահին տուֆակերտ, եռահարկ մշակույթի տունը գործող չէ: Մշակույթի տան առաջին հարկում իր աշխատանքներն է կազմակերպում Գեղակերտի բուժամբուլատորիան, որը սպասարկում է չորս համայնքի: Առաջին հարկը ամբողջովին վերանորոգված է համայնքի և Առողջապահության նախարարության << Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ>> Պետական հիմնարկի հետ կնքված համատեղ գործունեության շրջանակներում: Համայնքի միջոցներով փոխվել են երկրորդ և երրորդ հարկերի պատուհանները, հիմնանորոգվել է տանիքը և մասամբ նորոգվել է

Երկրորդ հարկը, սակայն երրորդ հարկը ունի հիմնանորոգման իսկ երկրորդ հարկը նորոգման կարիք: Համայնքում կա մանկապարտեզ, որը գործում է երկու խմբով: Մանկապարտեզի շենքը, ինչպես նաև բակում գտնվող խոհանոցն ամբողջությամբ վերանորոգվել և կահավորվել են համայնքի միջոցներով: Մանկապարտեզի և խաղահրապարակի գույքը տրամադրվել է բարեգործների կողմից:

Գյուղում կա ծանրամարտի դպրոց, որն ունի փառավոր մարզական անցյալ: Գյուղի մարզադպրոցի ծանրամարտիկները ներկա պահին էլ բարձր են պահում մեր մարզադպրոցի անունը՝ ամենահեղինակավոր առաջնություններում գրավելով մրցանակային տեղեր:

Համայնքում գյուղատնտեսական մթերքների վերամշակման կազմակերպություններ չկան: Գյուղմթերքների վերամշակման և մթերման կազմակերպություններ կան Վաղարշապատում և Արմավիրում, սակայն մթերող գործարանները գյուղացու ապրանքը մթերում են ցածր գներով և ոչ ձեռնտու պայմաններով, որ պատճառով գյուղատնտեսական ապրանքներ իրացվում են հիմնականում մայրաքաղաքի մեծածախ առևտրակետերում, ինչպես նաև վերավաճառողների միջոցով: Համայնքի բնակչությունն ունի գյուղմթերքների իրացման խնդիր:

Համայնքի ոռոգման համակարգը գտնվում է համեմատաբար բարվոք վիճակում: ՀՄՀ- Հայաստան ծրագրի հետ համատեղ գործունեության շրջանակներում համայնքը սպասարկող մի շարք ջրատարներում/ մոտ 2500մ/ տեղադրվել են կիսախողովակներ, որոնք կնպաստեն ոռոգման ջրի ժամանակին մատակարարմանը և բերքատվության բարձրացմանը:

Գեղակերտի գյուղական համայնքը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ: Համայնքում գործում է 9 առևտրային կազմակերպություն / խառը և ոչ պարենային խանութներ/ և 1 դեղատուն:

Համայնքում տրանսպորտի աշխատանքը կարելի է գնահատել լավ: Միջհամայնքային տրանսպորտային միջոցները աշխատում են անխափան: Համայնքում կա եթերային ֆիքսված հեռախոսակապ, ինչպես նաև գործում են բջջային երեք օպերատորները /Beeline, Viva Cell MTS, Orange/: Համայնքում ինտերնետ ակունքներ չկան և ինտերնետ կապը բնակչության համար ապահովում են բջջային օպերատորները՝ տարբեր հզորության մոդեմների միջոցով:

Գեղակերտ համայնքը ծնունդ է տվել շատ արժանահիշատակ մարդկանց: Եվ դրանց մեջ առաջին հերթին կարելի հիշատակել աշխարհի և Եվրոպայի բազմակի չեմպիոն, Մոսկովյան օլիմպիադայի արծաթե մեդալակիր ծանրամարտիկ Յուրի Սարգսյանի անունը:

1918 թվականի Սարդարապատի հերոսամարտին մասնակցել են նաև սամաղարցիները՝ Հրանտ և Հրաչ Սարգսյան եղբայրների հրամանատարությամբ, որոնցից Հրանտ Սարգսյանն ունեցել է ցարական բանակի սպայի կոչում: Ճակատամարտի մասնակից Հովհաննես Բաղրամյանի անձնական թիկնապահը ևս եղել է սամաղարցի՝ Հովհաննես Մկրտչյանը:

1924թվականին Աղասի Խանջյանի ստորագրությամբ Ջաջուռից մինչև Հոկտեմբերյան երկաթգծով նավթամթերքների տեղափոխման պատասխանատու է նշանակվել մեր համագյուղացի Գերասիմ Աբեյանը:

Որպես քաղաքական գործիչ կարելի է նշել է Իսրայել Պետրոսյանին, որը եղել է այն ժամանակ Անդրկովկասյան Հանրապետությունների օկրուգի պատգամավոր, ապա նաև ՍՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր: Իսրայել Պետրոսյանը եղել է Սամաղարի առաջին գյուղական խորհրդի նախագահը:

Սամաղար գյուղում կոլեկտիվ տնտեսության ստեղծվելուց հետո նրա առաջին նախագահին է եղել Սարգիս Արսենի Համբարձումյանը, որը հետագայում դարձել է Երևանի մեխանիկական գործարանի տնօրեն:

1960 ական թվականներին հանրապետության ճանապարհային ավտոտեսչության պետը եղել է Սամաղարի բնակիչ Յուլակ Գևորգյանը, որը հետագայում պաշտոնավարել է որպես Երևանի պատմության թանգարանի տնօրեն և որի անունով

այժմ անվանակոչված է մեր համայնքի փողոցներից մեկը:

Սամաղարցի է եղել նաև առաջին կին օդաչուն՝ Ռոզա Աբրահամյանը, որը եղել է Երևանի Պաշտպանության ավիացիոն ակումբի առաջին սաներից մեկը, ակումբում անցել է եռամյա դասընթացներ, որտեղ և ստացել է օդաչուի, ապա նաև հրահանգիչ-օդաչուի գիտելիքներ և թռիչքներ է կատարել <<ՊՈ-2>> ինքնաթիռով :

## 2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Գեղակերտ համայնքը գտնվում է Արարատյան դաշտավայրում՝ Արմավիրի վարչական տարածքում, ծովի մակերևույթից 900 մետր բարձրության վրա: Մարզկենտրոնից տեղակայված է 25 կիլոմետր հեռավորության վրա՝ դեպի հյուսիս արևմուտք, ԱԷԿ-ից գտնվում է 10 կմ հեռավորության վրա, մոտակա երկաթգծից՝ 17 կմ: Մայրաքաղաքից գտնվում է 25 կմ հեռավորության վրա: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է +11 աստիճան, ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվում է հուլիս-օգոստոս ամիսներին՝ +36<sup>0</sup>-ից մինչև +40<sup>0</sup>, իսկ ամենացածր ջերմաստիճանը հունվար ամսին՝ մինչև -30<sup>0</sup>:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 665 հա:

## 3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	(200-270 մմ)
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (°C)	(-30°C)
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (°C)	(+40°C)

## 4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից	
1.1)	
1.2)	
1.3)	
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Սամաղար
3. Համայնքի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	25
3.2) մարզկենտրոնից (կմ)	25
3.3) պետական սահմանից ցուցիչ գծով (կմ)	30
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	4
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	2
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	17
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	900

5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	665հա
6. Սահմանակից համայնքների անվանումները	Հովտամեջ Առատաշեն Հայթաղ
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	ggegghakert@mail.ru
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	Geghakert.am
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	077-35-04-89
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	-
11. Համայնքի հեռախոսային կոդը	-
12. Համանքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	այո
13. Համայնքապետարանի փոստային դասիչը	1125
14. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

**5. ԲՆԱԿՂՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՂՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	2767
2. Գրանցված ծնունդների քանակը	31
2. Մահացության դեպքերի քանակը	23
3. Ամուսնությունների քանակը	10
4. Ամուսնալուծությունների քանակը	-
5. Տնային տնտեսությունների թիվը	561
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	53
7. Կենսաթոշակառուների քանակը	290
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	120

**6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

	2018թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	1

**7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ**

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ <sup>2</sup> )	60518
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	0
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	500

**8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	660
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	432,9
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	155,69
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	55
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	12
7. Խոզերի գլխաքանակը	89
8. Գյուղատնտեսական տեխնիկա	20
8.1 տրակտորներ (քանակը)	20
8.2 կոմբայններ (քանակը)	0
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	0

**9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ**

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	7
2. Համայնքում գազի ֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	63
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	ոչ
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	4
6.2 Էքսկավատորների քանակը	0
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	5
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 քանակը	0
6.6 Աղբատար մեքենաների քանակը	1
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակուումային փոշեկուլմեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	2 կմ
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	0

9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո
---	-----

**10.ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**  
*Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)*

	Ընդունված բյուջե	Փաստացի
1.Ընդամենըեկամուտներ	89555,1	87264,2
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդթվում՝	19200,0	
2.1 հողիհարկ	14000,7	9811,2
2.2 գույքահարկ	5200,0	7355,1
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	0	0
3.1 դոտացիա	45514,6	45514,6
3.2 սուբվենցիա	0	0
4.Մուտքերհողիօտարումից	1000,0	2763,8

*Համայնքի վարչական բյուջեի ծախսեր(հազ. դրամ)*

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենըծախսեր	69658,8	55532,7

*Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները(հազ. դրամ)*

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենըֆոնդայինբյուջեիեկամուտներ	-	-

*Ֆոնդային բյուջեի ծախսեր(հազ. դրամ)*

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենըծախսեր	18896,3	7040,6

**11.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ**

1.Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝	12
1.1 համայնքային ծառայողներ	7
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	30925,0
3. Ավագանու անդամների թվաքանակը	8

**12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
Խմելու ջրագծի վատ վիճակ	Ջրագծերի հիմնանորոգում

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Աշխատատեղերի բացակայություն	Աշխատատեղերի ստեղծում
Ներհամայնքային փողոցների վատ վիճակ	Փողոցների խճապատում հարթեցում
Էլեկտրականության հաճախակի անջատումներ	Էլեկտրական ցանցի հիմնանորոգում
Մշակույթի տան 2-րդ և 3-րդ հարկերի վատ վիճակ	Մշակույթի տան 2-րդ և 3-րդ հարկերի հիմնանորոգում
Մարզադպրոցի վատ վիճակ	Մարզադպրոցի հիմնանորոգում
Գյուղատնտեսական հողերի անմշակ լինելը	Արտեզյան հողերի գործարկում
Բուժամբուլատորիայի համար շտապօգնության բացակայություն	Բուժամբուլատորիայի համար շտապօգնության մեքենայի ձեռքբերում
Դպրոցի ներքին հարդարանքի վատ վիճակ	Դպրոցի ներքին հարդարանք